

րաւաւութիւններէ մասին, թէ ինչ մեծ գու-
մարներ են նոյնիսկ ժողովրդական թա-
րոններէ համար Եւրոպայում կամ Ռուսաս-
տանում, լսում եմ ինչ և ուսմ փողերով և պա-
պանութեամբ յայտնի գեղարուեստական թատրո-
նի, — աւանդ յիշում եմ մեր խեղճ հայոց բե-
մը, իր անձնաւորէր դերասաններով, իր թա-
փառական կեանքով (այսօր Արտիստական ըն-
կերութեան թատրոնում, վաղը վրաց աշխու-
կաններէ թատրոնում, յետոյ ժողովրդականում և
այլն):

Եւ իրաւ, մինչև Թրք հայ բեմը պէտք է
մնայ առանց սեփական թատրոնի:

Եւրոպացիներ, ամերիկացիներ, նոյնը և ուս-
գիտէ իր նուէրները առատ ձեռքով բաժանել
ըստ ժամանակի պահանջի, բոլոր տարի
որանց տալով ուսմ վաճառականը փողերը
նուիրէր եկեղեցի շինելու համար իր մեղաւոր
հոգու փրկութեան համար, բայց այժմ—նչ...
ամենքը լաւ հասկանում են, թէ ինչ բանի
արժէ տալ և ինչ բանի՝ ոչ: Արդէն ձեռք յայտ-
նի է, թէ ինչպէս զարմացրեց ամբողջ Մոսկ-
վային հանդուրժեալ Սայազովսկիովը, մի մարդ,
որ ունէր 30 միլիոն, և պահում էր ամսական
8 բուլբուլ ստացող խոհարարներ, որ ապրում
էր 4 սենեակում, մի խոսքով այստեղ ժառոտ և
այլ անպատեհ անուշ էր կրում: — այդ մարդը
յանկարծ թողնում է բոլոր իր կարողութիւնը,
իր 30 միլիոնը՝ ուսումնարաններէ և էժանա-
գին ընտանեկաններէ, գործակալութեան ին-
ժար: Ո՞վ կարող էր սպասել...

Մի քանի օր արանից առաջ մեհնում է Մոս-
կվայի նախկին քաղաքապետի կինը—Ալեքսե-
յան և թողնում է մօտ 2 միլիոն քաղաքին, որ
յօգուտ չքաւոր երեխաների ապաստարան
շինվի: Խելացի կինը հասկանում է, տեսնում
է, որ օրէնքօր աղքատութիւնը աճում է, բան-
աւոր մարդը հազիւ կարողանում է պահել իր
դուրսը, և ահա առատ ձեռքով օգնութեան
է գալիս խեղճ ժողովրդին:

Մոսկվայի կարող է պարծնել իր խոշոր
նշտարատունների անուններով: Մոսկվայի համալ-
սարանական կլինիկաները յայտնի են ամբողջ
Եւրոպայում և ամեն մի կլինիկան շինված է
մի առատաձեռն հարուստի փողերով: Երկու
տարի առաջ բացվեց կոնսերվատորիայի նոր
շինութիւնը և այդ փառաւոր շինութեան զա-
նազան մասերը շինված են Մոսկվայի հարուստ-
ների նուէրներով, օրինակ վեստիբուլը շինել
է, կարծես Մօրօգովը, բեմը—մի ուրիշ մարդ,
էլեքտրական ջահերը ընծայել է մի երրորդը:

Այժման գեղարուեստական թատրոնը վե-
րանորոգել է յայտնի Մօրօգովը, որ կէս միլիո-
նից աւել փող է մտնել այդ թատրոնի վերա-
նորոգման վրա: Բայց այդ թատրոնի մասին
ես առանձին պէտք է խօսեմ Մշակիչ ընթեր-
ցողների հետ:

Այս օրերս Մոսկվայի լրագիրներէ մէկում

դարձած դէպի արեգակը և դիակի թեւերի
տակ փայտէ յենարաններ զննելով, որ կանգուն
մնայ անուշ մէջ: Աճուն ունի մի ճառակուսի
մէջք տարածութիւն և կէս մէթր խորութիւն:
Դիակի միջուկ, երկար մնալով անուշ մէջ, որ մի
տեսակ օջախ է, հետզհետէ սկսում է թուլանալ,
հոտել և վայր ընկնել անուշ խորութեան մէջ
և մի մասն էլ գիշատիչ թռչունների և գազան-
ների բաժին է դառնում: Այդ գերեզմանատունն
ասվում է Բերբեր Շարաբանը: Երբ նկարագրու-
թիւնը խոր տպագրութիւն թողեց Րաֆֆիի
վրա նա լսում էր մեծ հետաքրքրութեամբ:

Անցան մի քանի չարախներ: Րաֆֆին հո-
մարեա թէ ամեն կիրակի օր ներկայ էր լի-
նում պատարագին: Մի կիրակի օր, ես դուրս
գալով եկեղեցուց, տեսայ որ Րաֆֆին ինձա-
նից աւելի շուտ է դուրս եկել Բերբերախի
եկեղեցուց և ման է գալիս վրդոված, առաջ-
նորդարանի դռան առաջ: Երբ ես մօտեցայ
նրան, այսպէս խօսեց.

—Այս ինչ է, մարդ չի կարողանում եկեղե-
ցում պատարագի արարողութիւնը, նոյն իսկ
սուրբ սուրբի՝ ժամանակ, սրբազնագործու-
թեան խորհրդին ուշադիր լինել և շերտնա-
ղութեամբ աղօթել: Մարդուս խանգարում են,
մի կողմից վաճառական դասը շուկաներ հանե-
լով, բօրսալի, բարաթի և առևտրի օրգիստու-
թիւններն են իրարու հարորդում, միւս կող-
մից էլ եկեղեցական զանազան կարգամբ վերա-
ծելով սեղանի վրա ահազին դրդիւնով, սկսում
է համարել: Աստուծոյ տաճարը սեղանաւոր-
ների տուն են դարձրել, այնպէս որ մարդ չը
գիտէ թէ դրանց սրին լսէ:

Ես կարող եմ քարոզակ առել, որ Րաֆֆին
մի շերտնաղ ջրիտառնայ էր և որքան ես
նկատել եմ, նա, մասնաւոր եկեղեցում, իրան
խիստ համար էր պահում և ամենայն երկիւ-

կարդացի, որ ֆրանսիական յայտնի կոմպոզի-
տօր Գուստաֆ Եւրպանտիէ, որի քարոզնե-
րով Պարիզի զանազան տեղերում բացվել են
մի քանի ժողովրդական թատրոններ, գալով
Վիեննա—իր «Լուիզ» օպերան դեկավարելու,—
մի ֆէլէտոն է գրում Վիեննայի լրագիրներից
մէկում և 10 օր չանցած մեծ գումար է ժողո-
վում Վիեննայում ժողովրդական թատրոն բա-
նալու համար:

Այս բոլոր փաստերը ապացուցանում են, որ
թէ ուսուց, թէ եւրոպացիներ լաւ հասկացել է
թատրոնի բարձր գաղափարը, նրա նշանակու-
թիւնը, երբեք մի ամբողջ, մի համալսարան
մեծերի և փոքրերի համար. նրա մեղմացու-
ցիչ նշանակութիւնը վարքերի վրա:

Բայց հայը:

Հայն էլ սիրում է նուիրել իր կարողութեան
մի մասը բարեգործական նպատակով...

Բայց երբ և ինչ նպատակով:

Կամ մանկ յետոյ, կամ ըստ պապական օր-
վորութեան, դարձեալ վանքերի, եկեղեցու, եր-
բեմն ուսումնարաններին, իսկ գրադարաններին,
հեղինակների կատարին, թատրոնի—երեւել:

Սակայն ներողութիւն, եղել է մինչև օրս
երկու դէպք, երկուսն էլ գեղեցիկ սեռի կող-
մից. առաջինը, հանգուցեալ Սմբատ Բէգ Լա-
լայանի մահվան առիթով մարդ (նոյնպէս հան-
գուցեալ) խոստացաւ 5 հազար բուլբուլ, այդ
փողերը մինչև օրս չը գիտէին ում տան,
բայց այժմ կարելի է տալ հայոց դրամատի-
կական ընկերութեան. երկրորդ դէպքը—հան-
գուցեալ տ. Մարգարեանից էր, դարձեալ 5 թէ
3 հազար բուլբուլ—ինքնուրոյն պիեսների մրցա-
նակ:

Բայց այս տարի մեռան Ակօպով, Ղուկասով
և թողին մեծ գումարներ եկեղեցիներին, —
իսկ թատրոնին ոչ մի կօպէկ, չը նայելով որ
լրագիրները միշտ խօսում են թատրոնի բարձր
նշանակութեան մասին. նոյն իսկ վերջէջ Ա.
Ի. Մանթաշեանի եկեղեցի շինելը Պարիզում...
Միթէ դա նպատակայարմար մի մեծ երեւոյթ է
այժման կեանքում, ոչ, չը կարծեմ որ այդ
շինութիւնը մի անուն թողնի ապագայում պ.
Մանթաշեանի համար, բայց մարմարեայ քարի
վրա ոսկեգօծ տառերով փորագրված լինելը—
թէ ում շինածն է և ում փողով ու որ թւակա-
նին: Մինչդեռ եթէ փողի կէսը յատկացվէր
հայոց թատրոնի յարատեւութեան և բարգաւա-
ման համար, պ. Մանթաշեան մի անուն կը
ժառանգէր, Լազարեանների և Յովնանեանի ան-
ուն հաւասար:

Ես թատրոնի ֆանատիկոս ծառաներից մէկն
եմ և միշտ քարոզում եմ, որ թատրոնի համար
հարկաւոր է փող, փող և փող: այդ փողը կը
տայ միջոց սեփական թատրոն ունենալու, ու-
րեմն և խաղալ կիրակի և առօրե, երբ հա-
տարակութեան մեծամասնութիւնը ազատ է և
տրամադիր է յաճախել այդ օրը թատրոն,

զածութեամբ լսում էր պատարագի արարու-
թիւնը: Մենք, եկեղեցու բազից գուրա գա-
լով, գնացինք Րաֆֆիի ընտանեկանը, որ եկե-
ղեցուն խիստ մօտ էր: Երբ մտանք նրա գրա-
սենեակը, նա վեր առնելով իր գրասեղանի
վրա դրված Մշակիչ մի քանի համարները,
որոնք նոր էին ստացվել և տալով ինձ, ասաց.
կարդացէ՛ք, դրանց մէջ են Բերբեր Շարաբանը,
որ դուք ինձ պատմեցիք և տեսէ՛ք թէ դուք էք
լաւ նկարագրել դրան, թէ ես:

Բերբեր Շարաբանը՝ սովոր էր 1876-ին
Մշակիչ բանաստեղծականում:

Գ Լ Ո Ւ Յ Մ

Հազիւ թէ մի դպրոցական տարի էր բոլո-
րել, որ Րաֆֆին Թաւրիզում ուսուցչութեամբ
էր պարագլուխ, նորանոր փոթորիկներ սկսե-
ցին բարձրանալ նրա դէմ: Ինչպէս տեսնեք,
նա Սալմաստում մտորակելով մի խումբ հայ
վաճառականների պակաս կողմից, շարժել էր
նրանց զայրոյթը և օս նախանձով լի առեւտու-
թիւնը դէպի իր անձը: Նա իր ետեւում թողել
էր մի անհայտ հակառակորդ բանակ, որից մի
քանի հոգի օձի պէս սողալով մտել էին Թաւ-
րիզ: Նրանք, միասնաբար մի քանի թաւրիզեցի-
ների հետ, սկսեցին Րաֆֆիից զանազան հին և
անարդար դաժնութիւններով դրամական պահանջ-
ներ անել: Մի քանի օրացաւ հայ վաճառա-
կաններ, մէջ մտնելով իրեն իրաւարարներ,
ժողովներ արին և գործը զննեցին, որոնց մէջ
նրա հակառակորդները չը կարողանալով իրանց
առնելիքները հաստատել աւելի և աւելի գալ-
բացան:

Եւ այդ եղաւ նրա հալածանքի սկիզբը: Հա-
կառակ հոսանքը Րաֆֆին Սալմաստում պոստ
և ուրացող էր անուանել, Թաւրիզում նոր
կազմված հակառակ բանակն սկսեց նրան ա-
նուանել որպէս առևտրական խարդախ, թե-

քան երկուշաբթի օրերը, որ կոչվում է «նա»
օրեր. կը տայ միջոց լաւ խումբ կազմակեր-
պել, ինքնուրոյն պիեսների համար պրեմիաներ
նշանակել, լաւ թարգմանիչներին առատ վար-
ձաւորել, երիտասարդ և ընդունակ ոյժերին ու-
ղարկել կատարելագործվելու և այլն...

Իսկ ով սպասում է հայոց թատրոնից եկա-
նուտ, սխալվում է: Թող բարեհաճեն տեսնել
թատրոնների ընկերներ և կը համոզվեն, որ Եւ-
րոպայի գլխաւոր մայրաքաղաքների թատրոն-
ները միշտ ստացել են և ստանում են մեծ
օժանդակութիւն...

Եւ հասկանալի է... քանի որ թատրոնը
բարձր ուսումնարան է, համալսարան—իսկ
վերջինները հո... օգուտ չեն տալիս—ուրեմն
ինչու էք թատրոնից սպասում: Այն, մի որդ
չափով կարելի է աւելցրէ ծախսերը կրճա-
տել, բայց այս խօսքերը չեն վերաբերվում
Թիֆլիսի դրամատիկական ընկերութեան, այլ
ուրիշ տեղերի համար է:

Դերասան Կ. Պետրոսեան
ՆԵՐՖՅԷ, ՂՈՒՐԵՆՆԷ

Երէկ մենք հաղորդեցինք, որ Թիֆլիսի մի
խոշոր դրամատիկ խոստացել է 100,000 բուլբուլ
նուիրել Թիֆլիս քաղաքին այն պայմանով,
որ այդ գումարով մի հիւանդանոց հիմնվի ներ-
քին և խիբուրդական հիւանդութիւններ ունե-
ցողների համար: Այժմ կարող եմ աւելացնել,
որ այդ դրամատիկը պ. Մ. Արամեանն է:
Նուիրատունը արդէն ուղարկել է Թիֆլիսի քա-
ղաքապետին իշխան Արդուսեանին 25,000 բուլ-
բուլներ կը վճարէ այն ժամանակ, երբ քաղա-
քային վարչութիւնը վերջնականապէս կը մշակէ
հիւանդանոցի նախագիծը:

Անդրկովկասեան երկաթուղու Թաուզ կայա-
րանից հեռագրում են «KABAZE» լրագրին հե-
տեւանք. «Լեւելով, որ յայտնի աւազակ Բալա-
մուսան երեսցել է Զիլվադարայի լեռներում,
Հաղալիս գաւառապետ Արնօլը և պրիստաւ
Տէր-Ասատուրեան ապրիլի 13-ին ուղևորվեցին
այդ լեռները: Հրացանաձուլութեան ժամանակ
Բալամուսան սպանվեց: Սա այն աւազակն է,
որ անցած ամառ մասնակցել էր մի ուրեւադ-
նիկի և երկու պահապանների սպանութեան
գործում, Հաղալիս քաղաքի մօտ մի խումբ
հայերի կողպատելու և այլ բազմաթիւ արա-
նութիւնների և կողպատումների մէջ»:

Հանդուրժեալ Չուբալովի նուիրած գումարով
Թիֆլիսում, Կիրօնայեան փողոցի վրա, կա-
ռուցվելիք ժողովրդական տանը հողային աշ-
խատանքներն արդէն վերջացած են և շուտով
տեղի կունենայ շինութեան հիմնադրութիւնը:

Սա մի թշուառ երեւոյթ է, որ մենք մեր
հասարակական գործիչներին ծածկում ենք սե-
տիղմով, որպէս զի նրանց ստուէրն էլ չը
տեսնվի: Հայը միշտ հայ է մնացել գրեթէ ա-
մեն տեղ իր նկատելի պակասութիւններով:
Եթէ Րաֆֆին օգնութիւն անտարբերութեամբ
ուշ չէր դարձնում այդ սպանալիքներին, հան-
դարտ չարունակելով իր ուսուցչական պաշ-
տօնը: Այս խայտառակ միջնադէպը երկար ա-
միսներ ձգձգվեց:

Սա մի թշուառ երեւոյթ է, որ մենք մեր
հասարակական գործիչներին ծածկում ենք սե-
տիղմով, որպէս զի նրանց ստուէրն էլ չը
տեսնվի: Հայը միշտ հայ է մնացել գրեթէ ա-
մեն տեղ իր նկատելի պակասութիւններով:
Եթէ Րաֆֆին օգնութիւն անտարբերութեամբ
ուշ չէր դարձնում այդ սպանալիքներին, հան-
դարտ չարունակելով իր ուսուցչական պաշ-
տօնը: Այս խայտառակ միջնադէպը երկար ա-
միսներ ձգձգվեց:

Մենք հաղորդել էինք, որ երկրագործութեան
և պետական կառուածների միխիստութիւնը
մտաւորութիւն ունի հիմնը մի նոր տիպի միջ-
նակարգ ուսումնարան, որ պէտք է կոչվի
կուլտուր-տեխնիկների ուսումնարան: Այդ ու-
սումնարանի նպատակը պէտք է լինի տալ գըլ-
խաւորապէս գիւղական աղքատակութեան այն-
պիսի մասնագէտներ, որոնք կարողանան դե-
կավարող խորհուրդներ տալ նրան զանազան
հողային-կուլտուրական աշխատանքներ կատա-
րելիս, օրինակ, անջրդի հողերը ջրարբի դարձ-
նելու, ձահիճներ չորացնելու, մշակված հողա-
բաժինները աւազներից պաշտպանելու, վա-
սակար միջխտների դէմ մաքառելու և այլ այս-
պիսի աշխատանքների ժամանակ: Մայրաքա-
ղաքի լրագիրները այժմ հաղորդում են, որ
երկրագործութեան միխիստութեան այդ նա-
խագիծը արդէն ներկայացրած է պետական
խորհրդին և կը ջնջվի այնտեղ գործառնային
նստաշրջանի ժամանակ:

«Правительство. Вѣстникъ»-ում հրատարակ-
ված են ժողովրդական ուսուցողութեան մի-
խիստին Բարձրագոյն տուած հրահանգները,
որոնք պէտք է հիւր ծառային միջնակարգ
դպրոցի վերակազմութեան վերաբերեալ օրէնս-
դրական աշխատանքների համար: 1) Գիմնա-
զիաները պահպանում են ութդասարան կազ-
մը. նրանց մէջ աւանդում են երկու հին լե-
զուներն են, բայց յունարէնի դասաւանդու-
թիւնը նրանցից չառերի մէջ անպարտադիր կը
լինի: Գիմնազիաները դասընթացի իւրացումը
արտօնութիւն է տալիս մտնելու համալսա-
րանները: 2) Բնական դպրոցները, որոնց
ուսման ծրագիրը պէտք է ենթարկվի վերա-
քննութեան, պահում են իրանց վեց հիմնական
և եօթներորդ լրացուցիչ դասարանները: Այս
վերջին դասարանից աւարտումը իրաւունք է
տալիս մտնելու բարձրագոյն տեխնիկական ու-
սումնարանները: 3) Բացի գիմնազիաներից և
բնական ուսումնարաններից՝ կը կազմակերպ-
վեն ուրիշ միջնակարգ դպրոցներ ամբողջա-
ցրած հանդիմանական ուսման ծրագրով՝ բարդ
կացած վեց դասարաններից: Այս ուսումնարան-
ներում ուսման աւարտումը իրաւունք է տա-
լիս ծառայութեան մտնելու նախադիւրսում: 4)
Հայն զարգացումն պէտք է ստանայ տեխնիկա-
կան և պրօֆէսիօնալ միջնակարգ կրթութիւնը,
որ պէտք է գործադրում տալ կենսիկ գործնա-
կան պահանջներին: 5) Առանցքային ուսուցողութիւն
պէտք է դարձնվի միջոցներ գտնելու վրա,
որոնցով ամեն տեսակ ուսումնարանների կրօ-
նական—բարոյական և առհասարակ կրթիչ ազ-
դեցութիւնը ուսանողների վրա բարձրացնելու,
նրապէս և ամբողջութեամբ նրանց մէջ անձնու-
րութիւն դէպի ուսուսկական պետութիւնը և ժո-
ղովուրդը: 6) Կրթական գործը, ըստ հնարա-
ւորութեան, լիովին իրականացնելու համար,

վրա:
Երբ նա հակառակորդները իրանց շինովի
թղթերով և խարդախած մուրհակներով նրա-
նից պահանջներ էին անում, երբ նա լսում էր,
որ Թաւրիզի հասարակութեան մի մասն էլ
զայրացած է իր դէմ, նա ընկնում էր սրտի
տառնապի պէջ, մի տեսակ տեղաշարժ զորու-
թեան մէջ: Երբեմն ստանաւորով կերպով էր
վերաբերվում Րաֆֆին դէպի հակառակ հոսան-
քի բռնած ընթացքը և քրիստոնէական հեղու-
թեամբ տանում էր այն ամեն տեսողի անար-
գանքները, որ տեղում էին նրա գլխին, բայց
երբեմն էլ նա դուրս էր գալիս իր խաղաղ
դիրքից և ազդու հարուածներ էր տալիս իր
անիրաւ հալածողներին: Նա նկատում էր, որ
նրանք մի առիթի են սպասում, որ նոր խոռ-
վութեան հանգին իր դէմ:

—Ես այժմ համոզվեցի, ասում էր Րաֆֆին,
որ մեր երկիրը ընաւ յարմարութիւն չունի
գրական գործիչի և ուսուցչի համար: Չը կայ
լաւ չըջան, չը կան կրթիչ և հրահանգիչ հաս-
տատութիւններ, որոնցից մարդս կարողանար
օգտվել: Ոչինչ չը կայ նպաստող, լաւ արա-
մարութիւն էլ, ինչպէս գիտե՛ք, այստեղ շատ օա-
րակաւ կարող է լինել: Երբ ես մտալով խորա-
սուզված եմ լինում մի բան գրելու համար,
յանկարծ տեսնում էք, հանդիստս վրդովելով,
կարեցին մտածութեանս թելը, որին այլ ես
չեմ կարող վերադառնալ և նա յաւիտեան կո-
րաւ ինձ համար Հարկաւոր է լինում մի ա-
ջող դէպք, որից ես նոր ի նորոյ ոգեղանկեմ,
բայց դրա փոխարէն առաջ է գալիս մի թշուառ
երեւոյթ, մի խայտառակ դէպք կամ մի զղուելի
գործ: Ոչ մի տեղում հանգիստ և բարօրու-
թիւն չեմ գտնում, ինչ թշուառ եմ ես... Այդ-
պէս է գրած իմ բաղդում:

(Կը չարունակվի)

պէտք է հիմնական պահանջներ, որոնց մէջ կարողանային համապատասխան դեկլարութիւն գտնել որ և է քաղաքի որոշ խմբի ուսումնականների սաները: 7) Համապատասխան այն պահանջներին, որոնք անվում են վերակազմվող միջնակարգ ուսումնականների, պէտք է անյուսպաղ միջոցներ ձեռք առնելն աւելի նպատակաւոր մարտ նախապատրաստութիւն տալու այդ ուսումնականների ուսուցիչներին:

Մեզ հաղորդում են Քէնիանից, որ դերասանուհի օրիորդ Վարդիթեր Ֆերէկեան ստացել է Պարսից «Էլզարէթ Ուլումից» (ժողովրդական լուսաւորութեան և գիտութիւնների միջնակարգութիւնից) տաղվին կարգի մեդալը— չքանչւնը և այդ չքանչւնը կրելու ֆիրմանը:

Շարաթ, ապրիլի 12-ին, արտիստական ընկերութեան ընդհանուր ժողովում վերջնականապէս վճռվեց ամառային բնակարանի հարցը: Ընկերութիւնը 9 տարով մի պայման կապեց պ. Քուսմանեանի հետ, որ պարտավորվում է Միջաշէրան փողոցի վրա Մայրերի պատկանած հողաբաժնին միացնել երկու հարկան հողաբաժնիները և նրանց վրա չինել թաղանթ այն նախագծով և մակարդակով, որ կառավարիչ ընկերութիւնը Ամառային բնակարանի համար արտիստական ընկերութիւնը պէտք է վճարէ տարեկան 7,000 ռուբլի:

ՎԱՇԷԼՎԱՆ գրւղից (Քիթիսի գաւառ) մեզ գրում են. «Ապրիլի 8-ին, երեկոյան ժամը 5-ին, Վաշեվան և Գուլիս գիւղերի անտառի սահմաններում 5 թուղթ յարձակվում են Բօրբալուրի բնակիչներ Բեման, Գոզա և Սարգիս Բեմանեանների վրա, որոնք իրանց ընտանեկանով վերադառնում էին (3 սայլով) Ունիս ս. Գէորգ կոչված ուխտատեղից: Աւաղակներից երեքը զինված են լինում սրերով, չորրորդը բերդանի, իսկ հինգերորդը երկփամփոյանի հրաքաններով: Սկսվում է երկու կողմից կռիւ, որը տևում է մօտ մի ժամ: Առաջինները, չուհեանալով ոչ մի զէնք, քարերով էին պաշտպանվում. իսկ վերջինները, տեսնելով, որ չը պիտի կարողանան իրանց նպատակին հասնել, դիմում են զէնքի: Մէկը նրանցից արձակում է հրաքան. զնդակը շարժում է մի եղանակով, երկրորդը զնդակը փչում է Սարգիս Աղէքսանդր որդու աջ բազուկը: Իսկ երկրորդը խէնարով ամենաթեթեւ վերք է հասցնում Գոզի աջ և ձախ աղբրին ու փախչում է տանելով իրանց հետ մի ձի թամբով ու մի կապոց՝ ընդամենը 100 ռուբլու արժողութեամբ: Աւաղակներից երկուսը արդէն ձերբակալվել են, իսկ միւսները անյայտ են»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

• ԱՐՏԱՆԱՅԻՆԵՐԸ

Մակեդոնական հարցը ծնունդ տուեց այբա-նական հարցին: Մակեդոնացիների շարժումը առաջ քաշեց այբա-նացիների ամբողջ կատաղութիւնը և այսօր նրանք այդ կատաղութեամբ ու վայրագութեամբ ընդհանուր հետաքրքրութեան առարկան են դարձել:

Եւրօպան ծրագրել է բարենորոգումներով թեթեւացնել մակեդոնացիների վիճակը. սուլթանը համաձայն է, բայց ահա գրուին են բարձրացնում «սարի որդի» այբա-նացիները և հարցը խճճվում—բարդանում է. արեւը շա-րունակում է հոսել առատ հոսանքով. կոտորածներն ու ընդհարումները տեղի են ունենում աւելի սպառնական չափով ու որակով:

Ուղի՞ թուրքա... Մի ամբողջ պետութիւն չէ կարողանում զսպել մի բուռն ժողովուրդ: Թէ՛ն հրապարակ է հանել իր ամբողջ ոյժը:

Ուղի՞ սուլթան. նա չափ անհանգիստ դրու-թեան մէջ է ընկել, մանաւանդ այն օրից, երբ այբա-նացի զինուորի ձեռքով սպանվեց ուսուցիչ հիւպատոս Շէրբիւսան:

Եւ իզուր չէ այդ անհանգստութիւնը: Եւրօպական թերթերն ու հեռագիրները շարունակ յղգիւ լուրեր են բերում Բալկանեան թերա-կոցուցի, այբա-նացիները աւերեցին մակեդոնա-կան գիւղերը. այբա-նացիները ներս խուժեցին սերբիական սահմաններից. այբա-նացիները ընդ-հարում ունեցան թիւրք զօրքի հետ. այբա-նացիները որոշել են մինչև վերջը արքայը հանդի-սանալ մակեդոնական բարենորոգումներին—ա-հա զրանք են վերջին նորութիւնները: Նորու-թիւններ, որոնց մէջ բարձրանում է այբա-նացի ժողովուրդը իբրև օրվայ հերոս:

Ուրեմն արժէ մօտիկից ծանօթանալ այդ հե-րոսի հետ:

Շատ հին է այբա-նացիների պատմութիւնը: Բալկանեան թերակղզու ամենահին ազգերից մէկն են նրանք: Հաւանականօրէն իլլիրիացի-ներն ու էպիրոսներն են եղել նրանց նախա-հայրերը:

Այբա-նացիները առաջին անգամ աչքի են ըն-կել իրանց քաղութեամբ Էպիրի Պերթ թագա-ւորի օրերում: Դրանից յետոյ նրանց հայրենի-քը բոլորական թագաւորների (Սիմէն, Սա-մուէ) իշխանութեան տակ է ընկել, իսկ XIV-դ դարում ըստմանքով է եղել հարեան պե-տութիւնների մէջ: Այբա-նացիի սրբնական մա-սը բիւզանդական իշխանութեան է ենթարկ-վել, հարաւայինը—Նէպոլի, իսկ հիւսիսային մասը—Սերբիայի:

Բայց այդ ժամանակ էլ այբա-նացիները միշտ խոյս են տուել խաղաղ ու հանգիստ կեանքից, միշտ խլրտումներ են առաջացրել տիրող տա-րի դէմ: Այբա-նացիում կատարեալ անիշխանու-թիւն էր տիրում, երբ Բալկանեան թերակղ-զու վրա յայտնվեցին թիւրքերը: Առաջ շարժ-վեց թիւրքերի յաղթական արշաւանքը. հեշտութեամբ հպատակացրեց սլաւոն ազգերին: Իսկ Այբա-նացին մի ուժեղ հարուած հասցրին կանգնեց այդ հոսանքի դէմ և հերոսութեամբ պաշտպանեց իր անկախութիւնը:

Այն, անկախ էր Այբա-նացին Նրա զաւակնե-րը Կատրիօտի, կամ ինչպէս իրանք թիւրքերն են ասում, Իսկէնդեր-բէկի առաջնորդութեամբ 1444 թ. աւաղակին մի ուժեղ հարուած հասցրին թիւրքերին և նրանց յետ մղեցին իրանց սա-նաներից: Անառիկ լեռնափայտ չընդունեց թիւրքական լուծը:

Բայց երկար չը տևեց այդպիսի դրութիւնը: Կատրիօտի մահից յետոյ այբա-նացիները ընկ-նակեցին և կամաց կամաց հպատակվեցին թիւր-քերին: Նրանցից շատերն էլ գերազատ համա-րեցին գաղթել դէպի հարեան Խալիս՝ Սիցի-լիա, Ապոլիա և այլն:

Ահա այդ գաղթականների ժառանգներն են այժմեան իտալականալի այբա-նացիները (մօտ 200,000): Ահա դրանց շարքերին են դուրս եկել իտալական շատ նշանաւոր զինուորական ու քաղաքական գործիչներ, որոնց թւում է առաջին մինիստր Կրիսպին:

Բայց միայն թիւրքերի հետ չէր այբա-նացի-ները ընդհարում: Հիւսիսային մասումն էլ նրանք շարունակ կռւէ էին մղում ու լեռնի-ների հետ, որոնք նոյնքան քաջ, նոյնքան ա-զատասէր են, որքան և իրանք այբա-նացիները: Այդ կռիւը շատ մեծ ծաւալ ստացաւ մանա-ւանդ այբա-նացիների առաջնորդ Մանուէլ Բուզադիի օրերով: Գաջ և կատաղի զորավար էր Մանուէլը. նա վճռել էր մի անգամից վերջ դնել Մօնտենէգրօի անկախութեանը, բնաջինջ անել սլաւօն տարրը հարեան լեռներից:

Այդ ցանկութիւնը իրականացնելու համար նա հաւաքեց իր ամբողջ ոյժը և առաջ շարժ-վեց դէպի Սև լեռները: Բայց այդպիսի նրա ոյ-ժը աւելի զօրեղ հակադէմ հանդիպեց և խոր-տակվեց: Ընկաւ Մանուէլը (1779) և նրա մա-հը թեթեւութեւն տուեց ոչ միայն ու լեռնի-ներին, այլ և թիւրք կառավարութեանը, ու-րովհետև վերջին էլ շատ վախճնում էր Ման-ուէլի սանձարձակ քաղութիւններից, վախե-նում էր, թէ նա վերջ ի վերջոյ Այբա-նացիից կը ստեղծէ մի անկախ պետութիւն:

Սակայն Մանուէլը ունեցաւ իր արժանաւոր յաջողութիւն: Դա նշանաւոր Ալի-Քեփիւլին էր, որը XIX-դ դարի սկզբում իր ցեղակիցների հետ միասին բոլորովին բաժանվեց թիւրքից: Եւ սկսեց ազատ և անկախ գործել: Նա սկզբում դաշն կապեց Նապօլեօնի հետ, իսկ յետոյ անգ-լիացիների հետ, որով և աւելի սպառնական վիճակ ստեղծեց թիւրքի համար: Այդպէս անցան տարիներ. մեռաւ Ալի-Քեփի-լին և այբա-նացիները նորից խոնարհեցին ի-րանց գլուխները թիւրքերի առաջ: Բայց մի-այն ձևական խոնարհութիւն էր դա և ոչ իրա-կան:

Ճիշտ է, թիւրք իշխանաւորներն ու զօրքերը մտան Այբա-նացի խորքերը, հարկեր ու որոշ պարտականութիւններ նշանակեցին, սակայն այդ բոլորն էլ մեռած տառ մնաց, մի խառու-սիկ արտաքին և ոչ իրականութիւն: Մինչև օրս էլ այդ լեռնամարտ երկրի ներքին կեանքին չէ մօտեցել թիւրք վարչութեան ձեռքը: Այդպիսի չը կան կանօնաւոր ճանապարհներ ու զարոց-ներ, չը կայ դատարան, օստիկանութիւն ու հարկատուութիւն: Ամեն բանի տէրն ու տնօրէ-նը ինքը ժողովուրդն է:

Ե. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԻՆ

—Ինչպէս յայտնի է, մակեդոնական հարցը բարդվում է և այն հանգամանքով, որ Մակե-

դոնիայում տարող զանազան տարրերը—բօլ-գարներ, սերբեր, յոյներ—համերաշխ չեն: Մա-նաւանդ բոլորովին հակառակ ուղղութեան են հետևում յոյները, որոնք գործում են հակա-ռակ մակեդոնացիների և ի նպաստ թիւրքերի: Նորերս Աթէնքի համալսարանի թիւրքաշա-տակ յոյն ուսանողները միտնիզ գումարելով, արտալայտեցին իրանց երախտագիտութիւնը սուլթանին և խոստացան յանձնել իշխանու-թեան ձեռքը մակեդոնական խոռվարարներին, եթէ նրանց հանդիպելու լինեն Կ. Պօլսում մի յոյն փառաւորան, մի դասախօսութիւն կար-դաց գրական սիլլոգիսում «Մուլթանի օրէնա-դրական գործունէութեան մասին» 25 տարվայ ընթացքում: Վերջապէս, տիեզերական պատ-րիարք Յովակիմ III, չըլարեքական կօնդակ ուղարկելով եւրօպական թիւրքիայի միտրօ-պօլիտներին, պատուիրում է նրանց հսկել խոռ-վարարներին, այսինքն մակեդոնական հարցի գործիչների վրա և յանձնել իշխանութեան ձեռքը այդ «չարագործներին»:

—Խալիսայի Միլան քաղաքում, ապրիլի 7-ին, Մոնէտայի նախագահութեամբ, կայա-ցաւ մի ժողով բոլոր կուսակցութիւնների ներ-կայացուցիչներից ի նպատակ թիւրքիայի ճնշված ժողովուրդների Մի շարք ատենաբանութիւն-ներից յետոյ, որոնց մէջ ճառախօսները—քա-ղաքական և գրական գործիչներ և պատգամա-ւորներ—արտալայտեցին իրանց համակրու-թիւնը Մակեդոնիային և Հայաստանին, ժողո-ւրդ կայացրեց հետեւայ որոշումը. «Բոլոր կու-սակցութիւնների ներկայացուցիչները մի ժո-ղով, որ գումարեց Ե. Մօնտան, նախագահ ճեղագրութեան և իրաւարարութեան Լօմար-դական Միութեան, որոշում է՝ կազմել մի յանձնաժողով, որի նպատակը կը լինի շար-ժումն առաջ բերել իտալիայում ի նպատակ թիւրքիայի հարստաւարված ժողովուրդների, սկսելով մի մեծ միտնիզից, որ կը կայանայ Միլանում ապրիլի 26-ին»:

—Ճիւղաւորված մի լրագիր հաղորդում է, որ Միտրօփոյայի ուսուցիչ հիւպատոս Շէրբի-նան մեռաւ, զնդակահար լինելով ոչ թէ մի զինուորի ձեռքով, որ իբր թէ կամենում էր իր եղբոր վրէժը հանել, այլ իրողապէս նա սպանվեց պալատի արքանացիների հրամանով, որոնք հաղորդակցութեւն ունէին այդպիսի արքանացիների հետ: Մարմը գրկել էին պալա-տի արքանացիներին. «Զին եկել է. պէտք է նրա պալատը հանել»—Այդ, որովհետև նա չէ ընկնում սովորութեան համաձայն, պա-տախանեցին նրանց, Այդպէս էլ կատարվեց:

—Այբա-նացի թէ մահադատու և թէ կա-թօլիկ չըլաններում յայտնում են, որ եթէ ան-հարկի եղաւ պահել թիւրքական իշխանու-թիւնը Բալկաններում, «ամենախիղճը գործախ-տութիւնը» կը լինէր Աւստրիայի հետ միա-ցումը:

—«Berl. Tagebl.» լրագրի Լօնդօնի թղթա-կիցը հաղորդում է, թէ իբր Անգլիան, ծանօ-թանալով Մակեդոնիայի դրութեան հետ իր հիւպատոսները զեկուցագրեցին, որպէս ի ա-ռաջարկել մեծ պետութիւններին հաստատել միջազգային զինուորական յանձնաժողով Մա-կեդոնիայի համար:

—Մակեդոնական խմբագիրների պրօֆէսօ-րների և պատգամաւորների մի խումբ, որ վեր-ջերս մի բանկէտ տուեց ի պատիւ անգլիացի թղթակից Մաքսուելի, ուղարկել է «Daily News» լրագրի խմբագրութեան հետեւայ հե-ռագիրը. «Ներկայ դժուար և տխրալ ժամա-նակներում, երբ մակեդոնացիները իրանց լքե-ված են զլուծ և ուրիշ յոյս չունեն, բացի Աստծուց և իրանց վրա դրած յոյսը, մենք ե-րախտագիտութեամբ վկայում ենք, որ Մակե-դոնիան ձեռք բերեց իր համար հզօր դաշնա-կից յանձին «Daily News» լրագրի:

—«Berl. Tageblatt» լրագիրը մասնաւոր հեռագրի ներքին հիման վրա հաղորդում է, որ այբա-նացիները սպանուցեցին նրա ապագամ-բութիւն անել այն դէպքում, եթէ ուսուցիչ հիւ-պատոս Շէրբիւսային սպանող այբա-նացի Բրա-նիմին մահվան պատժի ենթարկեն:

—Շտուտգարդի վիճակագրական բիւրօյի նա-խագահ Ցելլեր կազմել է կրօնների մի նոր վիճակագրութիւն: Նրա հաշուով, ամբողջ երկրացիների բնակիչների թիւը հասնում է 1,544,510,000-ի: Դրանից 584,940,000-ը քրիս-տոնեայ են. 10,860,000—հրեական կրօնի են դաւանում. 175,290,000—մահմեդական են և 823,400,000 օտար դաւանութիւնների են պատկանում: Վերջին թիւը 300,000,000—կօն-ֆուցիաններ են, 214,000,000—բաւնմանիտ-ներ և 121,000,000—բուդիստներ: Ամեն մի 1000 հոգու վրա ընկնում է 346 քրիստոնէյ: 7 հրէա, 114 մահմեդական և 423 մնացալ դաւանութիւններ:

—Սօլոն քաղաքից գրում են «НОВОЕ ВРЕМЯ» լրագրին, որ երբ Շէրբիւսայի մահվան լուրը ստացվեց, այդ քաղաքի ուսուցիչ եկեղեցում նշանակվեց հոգեւանդատ, որին առաջաց ընդ-հանուր հիւպատոսը ներկայ գտնելու հրաւի-րեց և մնացած եւրօպական հիւպատոսներին Սակայն եւրօպական հիւպատոսները ներկայ չը գտնվեցան և յայտնվեց, որ նրանք խորհրդ-դակցութիւն կազմելով, գտել են, որ հոգե-հանգիստը «մանիֆեստացիայի» բնաւորութիւն է կրում, ուստի և որոշեցին չը մասնակցել նրան, որպէս զի չզբողեն այբա-նացիներին:

—Նոյն լրագիրը հաղորդում է, որ թիւր-քերը, ըստ երեւոյթին, բաց թողեցին յարմար օրակէն երբ կարելի էր այբա-նացիների վրա պա-տերազմական ազդեցութիւն գործել առանց

նշանաւոր զինուորական ոյժ գործ դնելու: Այ-ժմ ամեն կողմից լուրեր են հասնում, որ այ-րանական շարժումը ստատկանում է և աւելի լայն ծաւալ է ստանում: Իպէկից, հին Սեր-բիայից հաղորդում են, որ սուլթանի կողմից ուղարկած ուլէմների յանձնաժողովը աղողու-թիւն չունեցաւ: Այբա-նացիները յայտարարե-ցին, որ չեն հրաժարվի զինադրութիւնից: Նրանք պահանջում են, որ Բ. Դուռը չը նշա-նակէ քրիստոնէյ ժանդարմներ և նոր դատա-րաններ չը հիմնէ Առհասարակ նրանք լսել անգամ չեն կամենում որ և ըէֆօրմի մասին:

—Անգեալ քաղաք, «Воскресная Почта» լրա-գրի խօսքով,—այբա-նացիները այնպես էին փողոցային ցոյց առաջացնել Կ. Պօլսում 29-րդ ալիսանցի-զինուորների սուլթանական գլխա-գիայից բաց կառքով պտտում էին եւրօպա-կան Պէրա թաղի գլխաւոր փողոցներով և ըէ-վօլվէրներ էին արձակում օգուտ 29-րդ ալիսանցի-զինուորների մեծ ժողաւորութեամբ կարանաւորեցին նրանց և ուղարկեցին Նիզի-ֆէօսկի Մի և նոյն ժամանակ այբա-նացի-թիւրք նապահների մի ուրիշ խումբ մերկացրած եա-թաղաններով յորջ խառնակութիւն առաջա-րեց օսմանեան մայրաքաղաքի մի ուրիշ թա-ղում:

—Պապի առողջութեան մասին անմիջապա-տեղեկութիւններ են ստացվում Առ այժմ վը-տանգաւոր նշաններ չեն երևում նրա դուռ-թեան մէջ, սակայն պապի ոյժերը անդադար նուազում են: Վախճանում են, որ մերձակայ ամիսներում կը հարկաւորվի պապի նոր ընա-րութիւն կառարելը: Իրա համար արդէն պատ-րաստվում են զանազան կուսակցութիւնները:

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒՄՈՐԻՍՏԻՆ

ԴՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

14 ապրիլ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Թագաւոր Կայսրը ամենաու-ղորմածօրէն բարեհաճեց Մեծ Իշխան Թագա-ժառանգի հովանաւորութեան տակ ընդունել ուսումնական աւտօմօբիլական ընկերութիւնը:

ՄՕՍԿՎԱ. Կիրակի օրը զինեքաւաճանգա-պետի տանը Նորին Կայսերական Մեծութիւն-ների ներկայութեամբ տեղի ունեցաւ երա-ժշտական երեկոյի: Կօնցերտից յետոյ ընթրիք էր պատրաստված:

ՀԵԼՍԻՆԳՅՈՐՄ. Ապրիլի 13-ին մեծ աղո-ղութեամբ տեղի ունեցաւ ուսուցիչ ներկայա-ցում բարեգործական նպատակով:

ՄՕՍԿՎԱ. Ապրիլի 14-ին, 3 ժամ 20 րո-պէին, Նորին Մեծութիւնները և Նորին Բարձ-րութիւնները այցելեցին Մօսկվայի ազնւական-նութեան գիշերօթիկ դպրոց—ապաստարանը Պետրօվսկի—Ալէքսանդրօվսկում, որտեղ նրանց դիմաւորեցին ազնւականութեան նահանգական պարագլուխը և ապաստարանի ղեկավարը: Թագուհի-Կայսրուհին և Մեծ Իշխանուհին փնջեր մատուցեցին Սերկորդ յարկի դաշիճում շարքով կանգնած էին դպրոցի և ապաստարա-նի երեխաները: Տեղական ազնւականներն ու տիկիները դուրս էին եկել դիմաւորելու: Շքամբի է մերեքերիկ ու Պիւլէ մինիստրնե-րի ուղեկցութեամբ Նորին Մեծութիւնները և Նորին Բարձրութիւնները մտան եկեղեցի, որտեղ լռեցին կարճատեւ մաղթանքը: Եկեղեցու երեցփոխ կոմս Օրլով—Դաւիդով Թագուհի Կայսրուհուն մատուցեց XV-րորդ դարի մի հին խաչ: Դրա-նից յետոյ Նորին Մեծութիւնները և Նորին Բարձրութիւնները զննեցին ապաստարանը, թէյ խմեցին և Իրանց անուններն արձանա-գրեցին այցելութիւնների գրքում: Աշակերտ-ները «ճուռա» բացականչութիւններով ճանա-պարհ դրին Նորին Մեծութիւններին: Փողո-ցում ժողովրդի մեծ թաղութիւն կար: Մեծա-գին կոչերի ուղեկցութեամբ Նորին Մեծութ-թիւնները գնացին Մօսկվայի արդիւնաբերա-կան դպրոցը, որը մանրամասն զննելուց յետոյ, այցելեցին առեքարական արական դասարան-ները:

ՔՕՄ. Այստեղ հասաւ Լուբէն, որը Դեկա-սէից հեռագիր ստացաւ, թէ ապրիլի 16-ին ամերիկական նաւախումբը կը գայ Մարսէլ՝ ողջունելու համար Լուբէն ծովով ճանապարհ ընկաւ դէպի Տունիս:

15 ապրիլ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Գնահաւաքիւտանա Կուրօ-պատկին ծառայութեան գործերով հեռանում է. ուստի բարձրագոյն հրամանով զինուորական մինիստրի պաշտօնակատարութիւնը յանձնվում է գլխաւոր շտաբի կառավարիչ զենեքաւաքիւ-տանա Սախարովին:

ՄՕՍԿՎԱ. Այսօր Թագաւոր Կայսրը և Մեծ Իշխանը այցելեցին զինեքաւորեան գնդերի զօ-րանիցները: Թագաւոր Կայսրը զննեց զօրանց-ներն ու խոնարհեցնելով, ճաշակեց կերակրից և այցելեց օֆիցերական ժող

Электротпечатная Груз. Изд. Т-ва, В.-Вавицкая ул.